

Կ. Մ. ՄՈՒՐԱՂՅԱՆ (1938—1991)

1991 թ. հոկտեմբերի 8-ին հայագիտությունը կորցրեց իր շնորհալի և ջանադիր սպասավորներից մեկին՝ միջնադարագետ Կիմ Մուրադյանին, որ երկու տասնամյակից ավելի անդադրում պրպտումներ էր կատարում հայոց թարգմանական մատենագրության մարզում։ Մահից մեկ շաբաթ առաջ նա մասնակցեց Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակին նվիրված միջազգային գիտական նստաշրջանին։

Երևանի համալսարանի բանասիրության ֆակուլտետն ավարտելուց հետո, պրոֆ. Խորեն Սարգսյանի ղեկավարությամբ նա զբաղվեց հայ-բյուզանդական մատենագրական առնչություններով։ Նշանակալի ջանքեր պահանջվեցին զգալի մասով անցում կատարելու համար։ Աշխատասեր ու կարող երիտասարդը հմտացավ հունարենին և 1970 թ. որպես թեկնածուական դիսերտացիա պաշտպանեց իր անդրանիկ մենագրությունը՝ «Բարսեղ Կեսարացու «Վեցաւրեան» հայ մատենագրության մեջ»։ Պահպանված տասնյակ զրյազրերի, «Վեցաւրեան» հունարեն բնագրի և V դարի հայ մատենագիրների երկերում եղած բնագրական արձագանքների հետազոտության շնորհիվ նա պարզեց թարգմանության ժամանակի խնդիրը, հիմնավորեց կարևոր սրբագրությունների անհրաժեշտությունը։

«Վեցաւրեան» հետքերը հայ մատենագրության մեջ պրպտելիս Կ. Մուրադյանը վերանայեց Կորյունի, Եղիշի Կողբացու, Եղիշի ու Անանիա Շիրակացու գործերի աղբյուրներին վերաբերող շատ ավանգական դրույթներ։ Հետազոտում այդ ամենը «Վեցաւրեան» գիտական բնագիրը հրատարակելու հիմք ծառայեց, որով և սկիզբ դրվեց պրոֆ. Լ. Խաչիկյանի նախաձեռնած «Հայ թարգմանական հուշարձաններ» մատենաշարին։

Կիմ Մուրադյանը մի քանի տարի վարեց «Լրբեր հասարակական գիտություններ» ամսագրի պատասխանատու քարտուղարի պաշտոնը և օգտակար աշխատանք կատարեց խմբագրությունում, կարելույն չափ տեղ հատկացնելով մատենագրության պատմությանը վերաբերող ուսումնասիրություններին։

1976 թ. Կ. Մուրադյանը աշխատանքի տեղափոխվեց ԳԱ արևելագիտության ինստիտուտի նորարաց Կովկասագիտության և ըլուզանդագիտության բաժին։ Այստեղ նա ավարտեց ու հրատարակեց իր երկրորդ մենագրությունը՝ «Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ», որի համար նրան շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան։ Միաժամանակ գիտական հանգսնեցում նա տպագրեց մի շարք ուշագրավ աղբյուրագիտական բնագրագիտական ուսումնասիրություններ։ Այդ բնագրերից շատերը Մուրադյանն ինքն է բացահայտել ձեռագրերում և առաջինը քննարկել հայագիտության մեջ։ Հմուտ բանասերի նպատակը «երեք մեծ կապագովկայացիներին»՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուացու ամբողջական ժառանգության մենագրական ուսումնասիրությունն ու հրապարակումն էր, միշտ հետևելով հայ մատենագրության մեջ նրանց կատարած գերին։

Մահվանից քիչ առաջ նա հրատարակության հանձնեց Գրիգոր Նյուացուն նվիրված մենագրությունը։ Մի անբացատրելի կանխատեսությունը շտապեց ավարտել Բարսեղի «Պահոց գրքին» պատրաստումը՝ մեկ առ մեկ նշելով իր շտեղագրած էջերի պատկանելությունը։ Վերջին տարիներին Կիմ Մուրադյանը դերադանցապես հայ մատենագրերի գործերի աղբյուրագիտական քննությամբ էր զբաղված՝ մանավանդ Եղիշի, Շիրակացու, Օձնեցու և այլոց։ Անժամանակ ու անսպասելի մահը բազում ծրագրեր անկատար թողեց...

ՀԳԱ արևելագիտության ինստիտուտ